Թող չը Թողնե ինձ այդ ծամին քո սիրտն ստանց կարեկցանքի:

Ունեմ ճորտեր և գանձ անթիվ-դա լավ հայտնի ե բոլորին.
Տո՛ւր ճորտերիս ազատություն, գանձըս՝ աղքատ-չունեորին,
Յեկ լիացրո՛ւ դու ամենքին՝ վորբին և հեզ չըքավորին,
Կրակըծալով հիշեն Թող ինձ՝ փուչ աշխարհով շտապ անցվորին...

Ինչ հարկ չըկա իմ գանձերից քո գանձերին մաս կըցելու,
Բայց վորբանոց, անկելանոց, կամուրջ, ուղի տո՛ւր գըցելու.
Մի՛ խընայիր իմ ունեցածն ինձ հիշատակ գործածելու.
Բացի քեզից վոչվոք չունեմ իմ կրրակին ջուր ածելու:

Ի՛մ Թագավոր, ալարաքի յես իմ ձեռով գրած կրտակ,
Յեկ քեզ ահա պիտի Թողնե՞մ սրտով հուզված, մըրբրկատակ.
Մի՛ վըշտանար, ի՛մ սընուցող, մի՛ մըշուշիւ ճակատդ իտակ —
Շտու թշնամու պիտի հսկես և խընամես շատ հըպատակ...

¹²²⁾ Չիրափի: ¹²⁴⁾ Հախից: ¹²⁵⁾ Բաժին: ¹²⁶⁾ Հետապնդեց: ¹²⁷⁾ Ոտարի:
¹²⁸⁾ Փշալի շարժումին: ¹²⁹⁾ Գծում: ¹³⁰⁾ Նաղանդով: ¹³¹⁾ Թագավորը: ¹³²⁾ Հու-
սութք, թիքա: ¹³³⁾ Անակնկալ: ¹³⁴⁾ Զրացով: ¹³⁵⁾ Կլանեց:

*) Այս նամակ-կտակը գրում ե Ավթանդիլը Բոստան Թագավորին, յերբ-
հովառակ վերջինիս կամքի, նա Թողնում ե Արարատանք և գնում ե ոգնություն
խանելու Տարիյելին (Ընձենագորին):

ԱՎԹԱՆԴԻԼԻ ՍՈՒԳԸ ՃԱՆԱՊԱՐԶԻՆ

Յեւ վողրալով աշապես դիմեց արեգակին նա ամպափառ.

«Ճնդդում եմ՝ քեզ, ո՞վ արեգակ, հըզորագույն, հըզորալաւ,
Չնչին բույսին դու վեր քաշում, բաղդ ես տալի արքայաբար,
Ի՞նչ անջատիր իմ սիրածից, մի՞ դարձնիր ուրս խավար»:

«Դուսին, ինչո՞ւ տըխուր ես դու, ի՞նչ վիշտ ե քեզ տանջում, հուզում,
Գուցե ինձպես արե-յարից անջատ՝ խոր վերք ե քեզ կիզում.
Ասա՛ յարեա՛ նըրա չողից հեռու՝ հյուծվում եմ՝ նըվազում.
Նըրանն եմ յես, նըրա համար մեռնել միայն եմ յերազում»:

«Վա՛հ դու աշխարհ, խորհրդավոր, չարախնդաց ե քրմահաճ,
Թիշտ ինձ նըման լաց ե յեզել ով մի անգամ քեզ հավատաց.
Ո՛ւր ես նեաում վո՛րտեղացուն, վորտե՛ղ ե ի՞նչ վախճան կըտաս.
Սակայն քեզնից հարածվածին չի հալածի Տերը գըթած»...

Յեւ կարիճի ձայնն առնելով՝ թռչուն, դազան մոտ են դալի.
Ջրից անգամ նըրա վողրին վեր ե քաշվում գլուխը քարի.
Յկանջ դընում ե՛զարմանում, լացին լացով ձայն են տալի—
Էացն եր նըրա հեղեղալի, վողրն անուշ, մղկրտալի:

ԳՐՈՂ ՔԱՋԱՍՏԱՆԻ ԲԵՐԴԱՔԱՂԱՔԻ ՎՐԱ

Յուրաքանչյուրն առած մի դուռն, յերեքն*) եղան բաժան-բաժան.
Յերեք հարյուր մարդ ունեին, մեկը մեկից հոկա-դաժան.
Գիշերն անդուլ գնում եին ըզգուշ, լլուխ ե ժրքաջան...
Ծեղին՝ հանկարծ ամեն մեկի գլխին վահան կար տնրաժան:

Յեւ մարտակոչն հանկարծ հնչեց. թմբուկ նըրան արձադանգեց,
Ասպանդազարի նըթույզներին մարակների ձայն տըռաքեց.
Յերեք տեղից գըրոհն անցավ, պաշտպաններին սարսափ դարկեց—
Դադաքն անից խելակորույս դուռը բացեց ե ազմըկեց:

*) Տարիելը, Ավթանդիլը ե Փրիգորը.

Տարիելի մարտագուշից մարդիկ անգարկ չըջամած՝ փըլան.

Լանջապանակն ե ծրոմբովում, գրահներ պատառ-պատառ ելան...

Յերեք դռնից ներխուժեցին, անդիմադիր քաղաքն ստան,

Յեւ գրվելով՝ սարսափարեր ըսկըսեցին խելույն թալան...

ՍԻՐՏԸ ՎԻՐԱՎՈՐ

Ջըմնան՝ վարդի թուփն ե չորնում, դեղին տերեւն ե իր թավում—
Թռչնում ե նա, յերբ ամառվան արևն աչրում ե իր տապում,
Յեւ մինչ նա իր չողից, դրուից ստացած վերքիցն ե տառապում,
Սոխակն անգետ՝ նըրա վըրա սիրո հյուզերն ե թափթափում:

Աշապես ե ե սիրտը մարդու— հընար չըկա նըրան բուժել.

Ամեն մի վիշտ նըրա խորքում թողնում ե խոր հեռքեր—հուշեր...

Մարդն իր կյանքի տեքում յերեք լի—յերջանիկ որ չի քաշել...

Ովոր հուսաց բաղդի ծպտին, կանչել ե նա վա՛յ ու փուշեր...

ՎԱՐԴԻՆ ՈՒ ՓՈՒՇԸ

Վարդին ասին.

«Գեղեցկույթյուն անհամեմատ դու ըստացար.

Ինչո՞ւ փըլով քեզ պատեցիր ե պոկողիդ խոցում ես չար»:

Ասավ.

«Բաղցրին դառնով հասիր՝, լավը ճարվում ե միշտ դըժար—
Թե եժնացավ գեղեցկուհին, մի՞ տար մի՞ չիր անգամ վըճար»...

ԴԱՎԻԹ ԳՈՒՐԱՄԻՇՎԻԼԻ

(1705—1787)

Դավիթ Գուրամիշվիլին վրացական գրականության վերածնունդի շրջանի (17—18-րդ դարեր, «Արծաթի դար») ամենահայտնի քանոնագրող, ծնվել է Թիֆլիսի մոտ Գորիս Ռաբանի գյուղում: 1724 թվին լեզգիների մի հրոսակախումբ, վորոնցով արև ժամանակ վիստում էր բաղաբականության թուլացած վրացուհիներ, նրան գերի տարավ Դաղստան: Գերությունից փախչելով նա թերթ գեպի շրջանում բնակավ զապախների մի ստանիցա (չեն), ուր գտավ սիրալիր ընդունելություն: Այնտեղից նա անցավ Մոսկովյա, ուր այն ժամանակ ապրում էր գահալիք վախտանգ VI Թադավորը և ընդունվեց նրա շքախումբը «Ջարադարբաշի (զինանցապետ)» տիտղոսով: Յոթնամյա (1756—63) պատերազմներից նա մասնակցեց իրրեկ կամավոր ուս զորքերի հետ ու գերի բնկավ զերմանացիների ձեռքը, վորոնցից հետ գնվեց իր հայրենակիցների նյութական ոգնությամբ: Նրա յերկերի ժողովածուն, հեղինակի անունով, կոչվում է «Դավիթիանի (Դավիթական)», կամ «Գուրամիանի (Գուրամական)»:

Դավիթ Գուրամիշվիլի

ՀԱՏՎԱԾՆԵՐ «ԴԱՎԻԹԻԱՆԻ»-ԻՑ

Մենակ վաղու ձին կրթրվա արագընթաց, թեկույ կազ գա,
Դաճաճների աշխարհներում յերկար դաճաճն է մի հսկա.
Ով չի տեսել գեղեցկուհի, հավան է և աղեղ կնկա—
Դերբըս զրբի տեղ կորածի, վորտեղ ուրիշ գերբ էլ չլիա:

Ճակատագիրն ինձ ամլություն գլխիս խրվեց ինչպես մահակ—
Իմ տունն ու տեղն ալեր արավ, ինձ չտրվեց վոչ մի գալավ.
Յեկ յես յերգերս հորինեցի, վոր չրկուրչեմ անհիշատակ,
Վոր դեռ աղբեր շարունակեմ, յերբ կը յինեմ օն հողի տակ...

ԳԵՐՈՒԹՅՈՒՆ

(ինքնակենսագրությունից)

I

Յեկե՛ք, լըսեցե՛ք՝ յես պատմեմ թե ինչպես տարան ինձ գերի.
Հայրենի յերկիրս ալերվեց. յես բնակիչ դառա մի վայրի,
Վոր Լամիս-Ղանա^(*) և կոչվում, հենվում է Գաանի մեծ ձորին.
Բարեկամս ետեղ պատվիրեց, վոր հսկեմ մըլչակ-հնձվորին:

Առավոտ կանուխ վերկացա ու մենակ յերկու մարդ տարա,
Վոր ճաշը հոգամ մըլչակի, հետո միբանի գառն առա.
Մոտեցա յես խիտ անտառի մասի աղբյուրի ջինջ ալին.
Ետեղ յես պիտի սպասեյի գեղերից յեկող մըլչակին:

Թուրս ու հրացանըս դրրի կաղնու ծառի տակ անխընամ,
Հանգիստ աղբյուրին մոտեցա, վոր ձեռն ու յերես լրվանամ.
Տասն ու հինգ լեզգի եղ ժամին մըլտած անտառի մեջ դարան՝
Փորսողին տալով՝ գողունի հենց գալիս եյին իմ վըրան:

^(*) Լամիս-Ղանա գյուղը գտնվում է յերկաթուղու ըսան կայարանի մոտ Դուրս գավառում:

Հանկարծ գրոհ արվին համարձակ ու ինձ բռնեցին, դերեցին,
Անցկացրին հարյուր սար ու դաշտ, հեռու Դաղըստան վարեցին—
նրա՞ցրին յեփած խմորի սպաս, ուտեցրին ագանձ ու դրձակ:
Աչքերս ելին ցամփոտել արցունք թափելուց շարունակ:

Անիրավ էր իմ հյուրընկալն ու պատվեց ինձ շատ անիրավ.
Վոչ չոր, վոչ գրտակ ինձ տրվեց, պահում էր քաղցած ու ծարավ,
Յեւ ինձ, վոր ձրրի ձեռք բերեց, վորոշեց ծախել շատ թանգ նա:
Մեկ անգամ փախա, բայց բռնեց և ծեծեց սաստիկ, անխնայ:

Յես մենակ եյի ու բացի ասածուց ել տեր չունեյի,
Վոչ դենք կար ինձ մոտ, վոչ ել ձի, վոր հույսը վրբան գրնեյի.
Աստուծու վրբա հույս գրբի, սղատելով հարմար մի պահին.
Են պահը յեկավ—յես փախա, աչքերըս հառած ասույզ մահին:

II

Յերեկն ուղեցույց ինձ արև, գիշերն ուղեցույց եր լուսին.
Յոթը մուրախն ինձ տանում, մոտեցնում եյին հյուսիսին.
Գիշերով, չանցած Դաղստանն, յերբ յես մոտեցա լերի լեռան,
Արհամիւրք իջավ յերկնքից, ծանրը արհավիրք իմ վրբան:

Վերկացավ մրբիկ, ամբողջ, չանթալի կարկուտն հեղեղեց.
Շուտ—շուտ բրնձկով փայլակից աչքերի սուր ցավ ինձ նեղեց.
Աստուծոն չրկար. վոչ մի թուփ, վոչ մի ծառ չկար պատսպար:
Գոտիս կապեցի բաց գլխիս, մոռացա մարմինըս իսպառ:

Կարկուտի գլխիս ծեծելուց ուժասպառ գետին յես ընկա.
Բայց հանկարծ մի միտք սթափեցրեց՝ թե այր կա դուցե մոտակա—
Յեւ, փայլակի ցուրբերով լեռան տակ գլտա նեղ անձավ,
Սողալով մըտա, պառկեցի, մինչեւ փոթորիկը անցավ:

Անցավ փոթորիկ: Յեկա դուրս ու մատաղ արի աստըծուն.
Մատաղացու վոչինչ չունեյի, մատաղս եր միայն ջերմ արցունք,
Գրբար աղթեքին յես անգետ, վոչ ժամ կար ենտեղ, վոչ ժամուց—
Են մենակ լեզուս կրկնեց. «Աստված, ինձ փրկի՛ր թշնամուց»:

Յես հիմա թրվել չեմ կարող թե ինչ տանջանքներ եմ քաշել.
Գլուխս յերեք որ խոտերից յես չեմ սիտ արել վերքաշել.
Սարսափում եի քայլ անել, կարծելով ճամբես են կտակ.
Փորքս եր սաստիկ կըրտրում ու սովից մեջքիս եր կըսել:

Հեռանդողներից փրկվեցի պառկած—թաղընված յերեք որ—
Հինգ որ ու գիշեր ասլեցի ուտելով մենակ յոթ սալոր.
Յես քայլում եյի գիշերով, ցերեկով թրվի տակ սողում.
Տասնումեկ որ յես կտակսով մահվան դեմ եյի կռիվ մղում:

Տասերկու յերորդ որը յես տեսա ծառագուրի մի գետափ.
Յեւ ուրուր տեսած ծրտի պես հանկարծ ինձ բռնեց ահ—սարսափ—
Ծրտի պես խոտում պահվեցի—տեսածիս չեի ըսպասում—
Մյուս ափին արտի մեջ հանգիստ ունեցալոր կալ եր կասում:

Հեռո նավակով մոտեցան յերկու մարդ ըզզուշ են ափից.
Կարծեցի, վոր ինձ կը խղճան, կաղատեն ինձ ես տանջանքից.
Նորից հեռացան... վախեցրեց նրանց իմ գլուխն ամիլած:
Նորից մնացի յես մենակ և ինձ հետ իմ բաղձն անիծած:

Յես ինքրս նրանց տեսնելով դարհուրած եի ու մարած,
Փըշաքաղ, բիղ—բիղ մազերով, ուժահատ ծընկներս ծալած,
Շարժվել հագիվ կարացի, վերընկա մոտիկ շամբերում:
Յերեկ բաղից վորոշած ես պատիժն եի յես կըրում:

Մթնեց: Մի ալ ուր լուսացավ. տեսա, վոր չըկա հետևող.
Չբքնած՝ ծեղին վերկացա, թողի անկողինն՝ իմ թաց հող:
Գայլեցի նորից և Աստված նրվիրեց պարեն ինձ հանկարծ—
Յես տեսա ճամփիս կես ձմերուկ և վարունի յերկու հատ ընկած:

Ձմերուկն արեւից չըմըչկած՝ թրվաց տաքացած ու կեղտոտ.
Կըրացա՝ ջրում լըվանամ—գետը ինձանից շատ եր մոտ.
Վարունիներն ընկան իմ ծոցից—կարծես թե միմից սիրտըս նետ—
Ի՛նչ հարստություն, ի՛նչ վստիկ կը դար իմ կորած գանձի հետ...

Գետն ստավ, խըլեց. տքեցի, բայց չհաջողվեց հետ առնել.
Քիչ մընաց նրանց հետ և ինձ անգութ գետն առնեք կըլանեք.
Աստըծու դեմ յես վրդոված՝ լացով դրկեցի խոր բողոք.
«Թե տրվիր, ինչո՞ւ խըլեցիր, ինչո՞ւ ծաղրեցիր անողոք»:

Հանկարծ լռեցի զանգի ձեն, վոր յեկավ հեռվից, զողանջեց...
 Ասիւրաթ թրնդաց, աստըծուց կարծես թե հուսա խոսք հնչեց.
 Վեր թրտա առաջ վազեցի, նայեցի հեռու մշուշին
 Առ տեսա տաճար ու մարդիկ խաչ եին հանում յերեսին:

Ավելի մոտից զլռեցի ու տեսա յես պարզ ու վորոշ
 Կանանց գլխներին սառանի պողի պես ցցված ապարոշ.*)
 Աս թրվաց, վոր չար սատանան ինձ դեպի փորձանք եր հրդում.
 Հեռացա շտապով հետեղից, ուր հույսն ինձ առաջ եր մրդում:

Մտա պատկեցի շամբուտում, լեռներով խորքում թանձր տեղ,
 Բայց ասոված ձեգնից հեռացնի ինչոր պատահեց ինձ ետեղ.
 Զարթեցին գորբեր մոծակի, գրոհ աղվիւն վրաս քաջամարտ.
 Փղը կրգծվեր ներանցից, խեղ յես ի՞նչ եի—մի թույլ մարդ:

Յերբոր ինձ սառտիկ նեղեցին, վճռեցի՝ կյանքից հուսալուսը՝
 Փախչելու ետեղից ուր լինի, միայն թե փախչելու ու բշտապ.
 Վեր թրտա տեղիցս ու փախա ճամբադուրի ինչպես խելադար:::
 Առ հանկարծ տեսա կատողներ—ի՞մ առաջ բացվել եր մի կալ:

Ինձ յերբոր տեսան, ապշեցին, զարմացած խոր—խոր դիտեցին,
 Տղամարդիկ, կանայք մոտեցան, խեղճված չուրջրս պատեցին.
 Հաղերնին մենակ շաղիկներ, վզերին կախած եր խաչեր:
 Յերեսիս յես խաչ հանեցի, բսկբա խաչերը պաշել:

Հանկարծ լռեցի մեկն ասով, թե՝ «դաի խլեբա, Լա՛ղարի»:
 Յես «խլեբա» հենցոր լռեցի, ել խոսք ասելու սիրտ չարի.
 Մարմինս սառեց ու դողաց, խրդեց ու խփեց ծունկ ծնկա,
 Վտառ ինձ պահել չըկարաց, աչքերս մթնեց—վեր ընկա:

«Խլեբա» խոսքն ե «հաց» ուրեքեն, յես վազուց եի եղ լռելու.
 Եղ ժամին միայն հասկացա, վոր ուրսի աշխարհք եմ հասել.
 Յերբ «հացի» անուն լռեցի, հույս իմ մեջ զարթեց աղբյուր.
 Տանջանքս փախավ, մոռացվեց. յերազ եր անցածն ու հեռու...

*) Վրացերեն՝ խալտնի, յերեկ սուս կանանց КОКОШНИК—ը:

Մի դադախ գգացված մոտեցավ, լաց եկավ, գրկեց, համբուրեց,
 Նամակով առաւ, խոնամեց, ծեր հիշրս նրձան ինձ սիրեց.
 Ծաւա բերին ինձ մոտ մի թարգման Յանվար անունով վշտվեցի,*)
 Առ յես աճենքին մոնրոմասն ինչ գլխիս անցավ՝ պատմեցի:

«Ուրախ ամառ» Պոեմայից

I ԳԱՐՆԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Զրճեռն եր բազմել բյուրեղյա թախտին

Առ ձեռը դրել թուր-վահան—լախտին.

Սպասողեն գորբ ուներ՝

Զյուն սառուց, բոմբիկներ...

Պարծենում եր շատ...

Գարունն հարավից բանակ եր դրել,

Տեգն ալմաստ արել, թուրն ու սուր սրբել...

Յերբ ձրճեռն ես լռեց,

Զարացավ, դադաղեց

Բարեկուս նրձան:

Նա նեռեց գարնանն հայհոյանք առատ

Առ թափեց կարկուտ—զնդակի տարտուր...

Բայց գարունը պարպեց

Հրետանիք... ու բամբիկեց

Դրլուխը ձրճոտն:

Արեն ել յեկավ ողնության նրբան,

Տաք քամիներով լավ թափեց ձրճոտն.

Հեծավ ձրճեռն ուղիք,*)

Դրեց ձեռը բաշին,

Վա՛յ տարով փախավ:

*) Վրացական ղեղերից մեկը:

*) Սպասողեղանն նմուշը (պարսկերեն) Բաշի - Բոսամբի ձին:

Գարունն արչակեց աղմբով, ուժով,
Զմբուխտի թախտին բազմեց աշխուժով.

Յեվ յեկան նրբա չուրջ

Շնչավար ու անշունչ,

Աչքավուն արին:

Ինչ բան, վոր ձմռանն եր մերկ ու բոբիկ,

Գարունն հագցրեց կանաչ շոր կոկիկ

Յեվ տրվեց հրաման՝

Սմենքին անալայման

Բանտերից թողնել:

Գեղեղեղեց սոխակն... արտունն է գնդում,

Անուշ գրքուցում հոգույն ու կրկուն.

Սուլեցին սարյակներ,

Բասեցին տատրակներ...

Քաղցրը քուն չրկա...

Մեջատն ու դեռունն յերգի ձենն առան,

Դուռն ու յերգիկներ կտարեցին, յեւան,

Յելան մութ փոսերից,

Մըռայլ բանտ—խուցերից

Դաշա աղատ, ծաղկած...

II ՇՈՐ ԵՐԱՏԸ

Վո՛րդի, ենպիսի հարսնացու բեր տուն,

Վոր ահն աստրծու ունենա սրտում.

Կը վարձես միջիմարդ,

Վոր ըզգուշ ու հանդարտ

Ուզածըդ պտրե:

Թե հարյուր տարի լավ ապրել կուզես,

Տըղեղ աղջրկան «չեմ հավան» չասես.

Թող լինի ղգատտ, ուշիմ,

Զը սիրե ուրիշին,

Շաւկոտ չը լինի:

Պչով չի խրլի նրբան քեզանից,

Վոչ կը գողանա գողը քո տանից,

Ա՛խ ել չես ունենա,

Վախ ել չես ունենա.

Լավ, հանդիսա կտարես:

Իսկ սիրուն կրնկա մարդն է անհամբիտտ,

Կուսկածով, վախով տարված է նա միշտ.

Իր կրնկա պատճառով

Որ քաղցած, որ ծաղտով,

Որ հիվանդ է նա:

Պսում ե. «վա՛յ, թե իմ թե չը կտրած

Չալ հավիկն ուրիշ տեղ լինի ընտրած.

Բունն ինձ մոտ ունենա,

Կուտն ինձ մոտ ուտե նա,

Չուն ինձ մոտ չածե:

Կամ թե վերկենա ու հանկարծ թոչե,

Մեկ ուրուր սիրե, նրբա մոտ փախչե.

Ուրուրին շահեցնե,

Ինձ ետեղ մաշեցնե

Խանդից ու վշտից...»

Վո՛րդի, ունեցի՛ր անճոռնի տե հավ,

Քո հավարբնում ձու ածող լավ, լավ.

Գողն եսպես կը դատի.

«Են տեի ու վատի

Գող լինել չարժե»:

Քեզ մոտ, քո բակում նա կը կրկըջա,

Ձրվով լի աման քեզ նրվեր կրտա.

Ճուտերիդ կը հանի,

Ճուտերիդ կը սընի...

Ուրիշ ի՛նչ կուզես...

ԱՆԵՔՍԱՆԴՐԵ ՀԱՎՃԱՎԱԶԵ

(1786-1846)

Արեքսանդրեն վորդին եր հայտնի Գարսեվան ճալճալաձեի, վոր վրաց Իրակլի (Հերակլ II) Թագավորի դեսպանն եր Ռուսաստանում: Շնորհիւ և Պետերբուրգում. կեքամայրն եր Եկատերինա II կայսրուհին: Հինգ տարեկան նա մտաւ Փրանսիական դպրոց-պանսիոն, ուր մանկությունից հարակից յեղաւ յեվրոպական կրթության: 13 տարեկան նա յեկաւ Թիֆլիս և մտաւ Ազնոթականների դպրոցն ուսումը շարունակելու: 17 տարեկան (1803 թ.) միացաւ վրաց Փանոսավոյ արքայազնի պարտիզանական խմբին, վոր ապրտամարտէր եր Ռուսաստանի իշխանութեան դեմ. ձերբակալվեց և արտորկեց Սիբիր: Մի քանի տարուց հետո ներումն ստացաւ և ապա ավարտելով Պետերբուրգի «набесный корпус»-ը, մտաւ գինորական ծառայութեան: Մասնակցել է բազմաթիւ պատերազմներ (Իմիջի ալոց Նապոլեոնի դեմ): 1828 թվին նշանակվեց Պարսկաստանից նոր իրաւ Յերեանի և Նախիջևանի խանութեաններէ՝ Հայկական յերկրի (Армянская область) Զինվորական նահանգապետ: 1832-ին նորից կասկածի տակ ընկաւ իբրեւ դավադիր ուսուիշխանութեան դեմ. նորից արտորկեց և նորից ներում ստացաւ: Սրա դուտորը՝ Նինան հռչակավոր ուսու գրող Գրիբոյեդովի («Горе от Ума»-ի հեղինակ) ամուսինն եր:

Արեքսանդր ճալճալաձեի պոեզիան հանդիսանում է մի տեսակ կամուրջ, վոր միացնում է Արեվելքի (մինչև 19-րդ դարը) և Արեւմուտքի (19 դարից սկսած) ազդեցութեանները վրաց գրականութեան վրա:

Այնպե՛ս, Անվան, Անվան... Նրման է ծովին դու, մըրըրկախաղ

Յերբ աղմըկահաւոյ փոփըրում է նա ցասկոտ, ալլանդակ, Յեւ ծովից չքնաղ, բլուրեղի նրման, յերբ անշարժ, խաղաղ Յոյացնում է նա յեաների կանաչ, յերկնի կաշուտակ:

Բայց նրբա տիւն ցրված են տխուր լոկ ավերակներ, — Սգվոր հիշատակ անցած ազգերի մեծ-մեծ ջանքերի, — Ախին, ուր ծագելում էին անցյալում հարուստ քաղաքներ, Իսկ այժմ հանդիպում ենք լոկ փրչալարդ նըրանց հետքերի:

Այդ հետքերը այժմ իրենց նայողին վշտով են լցնում,⁴ Յեւ ամառութիւն ու վոշնչութիւն, լըտույթը խորին Այնտեղ մարդկային սրտեր են հուզում, աչքեր լացացնում Յեւ զիզում տալիս կրծքից արձակվող հառաչանքներին...

Ահա՛ մեծ ու ճոխ ինչոր քաղաքի մի մասի մնացորդ Յեւ զեղաքանդակ ավերակն ինչոր մի ապարանքի... Ահա՛ մեր արխուր ապաղան ալտեղ, ո՛վ դու կույր անցորդ, Ինչո՞ւ յես հարել դու պաճուճանքին չուտանցուկ կյանքի:

Նա, այս կամարն, հաղիվ ճանաչվող, յեղել է տաճար, Ուր Թագավորներ գըլուխ խոնարհած ծուռեկ էին դընում, Ուր աստվածային փառքն եր լըսում բարեպաշտ կաճառ Յեւ սողմունների հնչյուններն էին յերկնից սըլանում:

Այդ փլվածքն այսոր՝ զեղարվեստորեն դեպ յեթեր ձգտող՝ Տեւտում է իր տակ փոթորկից փախած լոկ վոշխար, տաճար, Կամ դարան մըտած զիշատիչ գաղան յեղնիկին հսկող, Կամ փախստական ավազակն այնտեղ Թագցնում է աճար:

Տես այս քարի կույտն, վոր չե կորցրել ձեզմ քառանկյան,
Տեղն և չուկայի, ուր կյանքն եր մի որ աղմբկում, յետում,
Յեզ նրբաճաշակ հայ արհեստավորն ու վաճառականն
Արվեստով, ինքով իրար հետ եին այստեղ պայքարում:

Նըրանց մեջերում շատերն են յեղել տեր քուրուրների*)
Յեզ հարուստ միայն վոչ թե արծաթով, այլ և մեծ վարկով...
Ուր և արդ նըրանց ձիրքը հոչակված, ույժը դարերի...
Այդ ամենն, ինչպես ավերված փոշի, տարվեց փոթորկով...

Իսկ այս լայնարձակ հարթակն ու վրան ցիր ու ցան քարեր...
Ասպարեզ եր սա, ուր լինում եին ձիերի վաղքեր,
Սեզ ուղմիկների զինախաղ, մարզանք և դեղախաղեր,
Ճոճ նիզակների, նետերի թրուխճ, տեղերի զարկեր...

Այս կողմը նայի՛ր. այս սե բեկորներն, այժմ մամուսպատ,
Իրար հետ կցված բարձրանում եին ու շենքեր կազմում
Յեզ նըրանց տերերն ընտանիքներով յերջանիկ, ազատ
Նըրանց մեջ մի որ զվարճանում եին և հանգստանում:

Այնտեղ ել գտա ույժ բազմած և յեղել բարձր գահույթին
Յեզ ժողովրդի բաղն են վորոչեկ նըրա դուժ, ցատում,
Այստեղ ել իրար հոչոտում եին կիրք, նախանձ ու քեն,
Այստեղ ել կար սեր և սիրողների մահացու մրցում:

Յեզ քանի՛, քանի՛ գեղեցկուհիներ անցած դարերի
Գրավել և վրձնա ծրփանքը լըճի դեպ իրեն ամեր,
Յեզ քանի՛ անգամ ցոլացրել իր մեջ հայելին ջրի
Գիշրի ծամերով բոլորված գեմքի չուշան ու վարդեր...

Յեզ քանի՛ անգամ լուսինն ինքնատեր, գոռոզն իր գեղով,
Նայել և նըրանց և վըհատ, ըշտապ ամպի տակ անցել...
Սակայն ժամանակն, համակործանիչն, իր սուր մանգաղով
Չե խնայել անգամ և գեղեցկութունն. այն ել և հրնձել:

*) Քուրուր, վրացերենում չգործածվող պարսկերեն բառ է, նշանա-
կում է 300.000.

ԼՈՅՒՆԵՐԻ ՄՈՒԽԱՄԲԱԶ *)

Լո՛ւթիք, բանա՛նի քեֆ ու հանդես,
Վոչ մի կենաց շանենք անտես,
Մահառն արդեն կարասներից
Մըրժրոտվով կանչում և մեղ:

Ջրմենն ինչքան ել ճրոճրոտ,
Թեկուզ ազոավ չը կըռկրոտ,
Ի՛նչ րան և ցուրտը մեղ համար,
Գլխում գինին թե վառվրոտ:

Գա՛վ տուր զինով — շատ եմ ծարավ.
Տեր-հոր խրրատ գրչուխ տարավ, —
Թող մեղավորը ջուր կուլ տա,
Ջրհեղեղին վոնցոր արավ:

Ի՛ր որ Նոչ պապն ուղար ուղեց
Ու յերբ խաղաղն արավ, մըղեց,
Ել հայրանին ջուրը թողած՝
Ինքը գինու մոտ սրպրդեց...

Կարիճներ, դե՛հ, գինին լակե՛նք,
Գինին մարսել մենք ըշտապե՛նք,
Վոր մինչեզ կոխին արյուն դառնա
Ու շատ արյուն կուլում թափենք:

Յերբ կովի հոտ գիտունն սունի,
Քնից նըրան դող կը բունի.
Լո՛ւթին կերթա՝ գլխապատառ,
Կամ կը մեռցնի կամ կը մեռնի:

*) Այս խրատիճանքի, շատ ժողովրդականացած յերզը յերգվում է բաղ-
մաթիվ, սակայն հեղինակին չգտականած վտրիստներով: Ամեն մի տան
առաջին և յերկրորդ սոգերը գերջանում են «հարխալեն» կանչերով, իսկ
յերկրորդ և չորրորդ սոգերը՝ «թարխալեն» կանչերով:

Դե՛հ, սուրբ հայրեր, թառերն առնե՛նք,
Գինին որհնե՛նք, փառաբանե՛նք,
Խրմե՛նք իսեր մեր կրթոնի,
Մահամսգի ջիգրը հանե՛նք:

Բրժի՛շկ, անուն մեծ կը հանես,
Թե իմ խորհուրդը հավանես,
Ինչ ցավ վոր չե բուժվում դեղով,
Գինին նրբա դեղը սնես:

Փուշ աշխարհի մեջ ապրելու
Բաղդը փողով չես առնելու,
Կոնձի՛ր, ժըլտո, թե չես մեռնես,
Գանձդ աւրիշինն ե դառնալու:

Ուրեմն առնե՛նք թառեր չինի,
Խրմե՛նք, լոթի՛ք, կրկին դինի,
Քանի դեռ կանք, կոնծաբանե՛նք,
Մեզնից հետո ինչ կուզե լինի:

ԳՐԻԳՈԼ ՈՐԲԵԼԻԱՆԻ

(1800-1883)

Գրիգոր Որբելիանին իր 16 տարեկան հասակից սկսած անց է կացրել գինվորական ծառայութեան մեջ: 1832 թվին նա աքսորվեց իրրե մասնակից այն դավադրութեան, վոր կազմակերպել էին վրացի ազնվականները Ռուսաստանի դեմ՝ նպատակ ունենալով վերականգնել Վրաստանի նախկին քաղաքական անկախութունը: 1839 թվին ներումն ստացավ և փոքր ինչ հետո սկսեց զբաղվել Կովկասում բարձր գինվորական—վարչական պաշտոնով: Յեղեկ և Կովկասյան չրջանի գործերի դիտավոր հրամանատար, փոխարքայի պաշտոնակատար և պետական խորհրդի անդամ: Ռազմական առաջընթացում նա հանդես ե յեկել իբրեւ զաման, անխնա սանձահարող յեռնակաների ազատական—հայրենասիրական շարժումների, սակայն ներքին կյանքի մեջ վրացական ազնվական կենցաղի և հայրենասիրական պոեզիայի ուժեղ ներկայացուցիչ: Սիրել և յերգել մշակին, կինտոին և աշխատել ե իր նորր հարմարեցնել Սալաթ—նոխյի հանգին: Գրել և քիչ:

ՀՐԱԺԵՇՏԻ ՅԵՐԵԿՈ

Արևը մըտավ, բայց չոյում է դեռ հրաժեշտի անդր
 Ծովը հովհանն... կարծես թույլ աղջիկ այլքը ծեր հոր...
 Լեռներն են լռում, վե՛հ կատարներով հրաժեշտ յերկնքին,
 Ժամադ գեղեր կարծես՝ ստուգեն ճերմակ թաղերը գլխին:
 Նրբանց ապառաժ ուտերին պառկած սև ամպերն ահեղ
 Սպառնում են վարի աշխարհին զրկել ծանր ջրհեղեղ...
 Իսկ անտառը ճոխ՝ մարգարի թափում յերկրած, պլնուն՝
 Նրբանց փեղերին բյուր ծաղիկների բույրեր է սրբում:
 Լեռների նեւած ջրերն անդնդում դոհար են շաղում...
 Թեքն է մրորնչում, մատախյուն կերճեր ծախաւիցում, գոգում...
 Թախծալի, արևուր նայում եմ ճամփին է վազող կառքին,
 Վար տարավ միակն, ինչոր ունի աշխարհում անգին,
 Նրբան, վոր ցոլեց կյանքը յերկնային շողերով վրան՝
 Յե՛վ բարձրացրեց հոգիս յերկրից տաղտուկ ու նրան...
 —Դե՛հ, դեռ՝ս բարով...սրհնությունըս քեզ լինի հովանի...
 Մինչ իմ մահ հոգիս, ուր էլ վոր լինես, քեզ հետ կլինի:
 Ել չրկան կյանքիս սրերը՝ քեզնով լուսավոր, խառակ...
 Ինձ մընաց հիմա ծանրը հոգս միայն է ծանրը վատապ...
 Կառքն է սրբանում, սիրածս հեռանում... է հոգիս իր հետ...
 Նայում եմ...հեռվում հագիմ յերևաց...չբացալ անհետ...
 Մըշուր հեռվից կրկանեց իր մեջ կառքը հեռացող
 Յե՛վ կոպեց սրտի խորքիցը անքոց, արտասուք ցնցող...

Լուս է ամեն տեղ: Լսվում է միայն կանչը պահակի
 Յե՛վ ձայները դուստ պնդությանս մեջ իմ հառաչանքի...
 Մթնում լեռների ծիւրն է յերկնամբարձ գծվում կապուտում
 Յե՛վ Ղազիրեղին մի ասող է մոտիկ դուրալի ժպտում...
 Լեռների նեւած ջրերն հառաչով անդնդ կն վրնում,
 Թեքն է մրորնչում, կերճեր դողանջում, դողում, թառանջում...

Գ Ի Շ Ե Ր

Սիրողների հավերժ վրկան՝ լուսինն եր իր լուսը փրում...
 Հովն եր փրցնում ծաղիկների բուրմունքը նուրբ, անուշ բուրում...
 Վարդի թըխի մեջ թաղընլած սոխակն եր սեր վարդին յեքում...
 Սիրտ աղմբում, հուրը սիրո հուգում եր նա է բորբոքում:

Վերսա կամար եր բուրել լայնատերև վաղի սաղարթ...
 Այնտեղ հոգիս, սիրտըս ընկան յերանալան սիրո թակարդ...
 Վայրկյանների յերթն եր տանջող...կանգուն էի լուս ու մարած,
 Հըմայլածի նրման գեղի մի կողմ աչքիս էլին հառած...

Այս ի՞նչ թրվաց...ու չբացալ՝ անուշ արցյոք չե՛ր խառուիկ...
 Բայց թալկացավ սիրտըս ինչո՞ւ, այն ի՞նչ հրալով թրվին հուշիկ-
 Սիրեկանիս դեռ չտեսած՝ հոգիս նրբան արդեն ըզգաց...
 Աչքըս նրբան դեռ չորոշած՝ շուրթերս էին նրբան հրաժ...
 Մեր յերկուսի միաքն ու հոգին յեռյեռացին, մի ձուլվեցին
 Յե՛վ տենչահար՝ յերանության ովկիանի մեջ սուղվեցին...
 Աչքերըս էլ չեին տեսնում—չրկար մի բան, վոր ըզգայինք...
 Անմիա էինք է անդեղու—... այս աշխարհում էլ չրկայինք...

Ի՞նչ տեղ էլինք այն ժամանակ, կամ ո՞ւր էլինք մենք կույր
 դրնում...

Մեր ուշքը մի վայրկյան վորով—դրամիտն եր հենց այդ վայրկենում
 Թուշում էլին ժամերն արագ, բայց մենք չեինք ըզգում ժամեր—
 Մեր ուշք ու մեր դիտակցություն յերջանկությունն եր սրպանել...

Արքայնորդի համբարձման ժամին հրճված նայում էր մեզ...
Հովն էր վրացնում ու մեզ բերում ծագելները բուրմունքը հեղ...
Վարդի թրիկի մեջ թաղանթած սոխակն էր մեզ համար յերգում,
Աիրա աղմկում, հուրը սիրո հուզում մեր մեզ և բորբոքում...

Այն ժամանակ ճանաչեցի ժամերըն յես դրախտային...
Յերանի՛ այն ժամերն այնպես անդարձ-արագ չընթանային...
Ո՛վ բազմ, ինչո՞ւ չես թույլ տալի մեր ցանկության հազարդ
տալուն...
Ինչո՞ւ ամեն յերջանկություն ապաստում և իր ընդհատելուն...

Յերբ արշալույսն արևելքում մեր հրաժեշտի ժամը դուժեց,
Մենք ըզդադինք՝ վորքան դիչերն արագ անցավ, մեզ դրոժեց...
Յերակվա լուսն անիծեցի, վոր մեր խնդանք փոխեց սուղի,
Յեվ մեր համբույրն անջատումի թրջեց ցոլումն արտասուքի...

ՄՇԱԿ ԲՈՐՈՒՆԱՅԵՆ

Ի՞նչ ես նայում դու ինձ եղպես զարմացած
Մի՞թե մըշակ մարդ դու յերբեք չես տեսել...
Գրտինք-թոզից յերկաթի դույն, կուրծքը ցիխ,
Վիրը կնճռոտ, հաստակեղևով, ժանդազույն,
Մի մարդ, վորի սիրտը կտարեց բազդը սև,
Վորին փառքույ աղքատությունն հալածեց,
Վորի ամբողջ կյանքը տանջանք է դառել
Մի չոր հացի կըտոր միայն ճարելու:

Յեվ ինչո՞ւ յես դու զարմանում. ես կնճխոն
Ին փաղածամ ճերմակերն իմ մաղերի
Հեռքեր ե՞ն խոր. իմ սրտի խոր ցավերի,
Մեծ փաստակի և հուռազուրկ վիճակի...
Բառ չգլխոն, վոր աշխարհում կա աղքատ,
Վոր կա մի տեղ, ուր դառն ապրուստ է յեղել...

Մի նայիր ինձ կսկրծողիս դու աղչած...
Աղքատ լինել շատ ծանրը բան է, յեղբայր...

Տեսում եմ յես, իսկ աշխարհը՝ յերգում —
Յերջանիկներն ու անհոգներն աշխարհի...
Սհա աշուղդ ձեն եմ լսում քյամանչի
Ու սիրտ երող Սայաթ-Նովի տաղն անուշ...
Ուզում եմ, վոր յես ես կողմից «Չո՛ն» տան
Բայց վո՛նք ձեն տամ, չե՞ վոր նըլլա...
Խորն եմ թաղում իմ մեջ «ա՛խ»-ն իմ կակիծի,
Թաղուն սրբում աչքիս յեկամ արտասուք...
Ե՛հ, ո՛ւմ ինչ բան, թե մի մըշակ է տանջվում...

Բայց ո՛վ եմ յես, ի՞նչ է անունս աշխարհում,
Յերբ իմ կյանքում յես մի լավ որ չեմ տեսել...
Ծանր աշխատանքն արավ ջահել կյանքս վոր...
Ապագայում ել հույս չունեմ լավ բանի,
Մինչև անգամ թույլ ճաճանչի խնդանքի...
Անիծվի՛ նա, ով մըշակ դաս սահմանեց,
Մի դաս՝ ամեն սփոփանքից զրկված,
Վոր մարդամեջ մարդու տեղ չի ընդունվում...

Ծեր եմ հիմա... և ի՞նչ պիտի վեր հիշեմ
Բացի վայրով ու տանջանքով յի կյանքից...
Հա՛մ ի՞նչ տեսա, վոր մեռնելիս ափոստամ...
Ինչպես յեկա, ենպես կերթում աշխարհից —
Դեռ չը մեռամ, դեռ կենդանի մոռացվամ...
Դե՛հ, իմ ծընունդն արդյոք ել ի՞նչ միտք ուներ...

Չե՛յ հաճույքի վայակ, անհոգ մեծացած,
Աշխարհը քեզ համար և վոր կա մենակ,
Բե՛յ ես մենակ սիրում ու քեզ զվարճացնում
Մարդի կանաչ, կապույտ յերկինքն ու արև,
Բե՛յ գուր դալու սևորակ աչքն և վառվում,
Բե՛յ է ճղաում մեջքը բարակ նաղանքով,
Ու քե՛զ համար ծովում նավերն են լողում,
Գեղարվեստի չըբեղ կործները բնրում
Յեվ յես, մըշակ, իմ ջերմով, քրտնքով,
Ծրնածա սրից հենց քե՛զ համար աշխատում
Առավոտից մաքրում աղբը փաղոցից,

Վար քո քրթին հոտը չը տա նեղութիւն...
 Յե՛մ ողորմում պատկառանքով բաշխելիդ...
 Արքա յես դու... իսկ ինձ չան տեղ չես գցում:

Ել ի՞նչ ասեմ... դուցե հիմա լողացիր,
 Թե ինչ դժվար է մի կտոր հաց ճարել,
 Թե ինչպէս սիրտն է փրշանում զրկանքից
 Աւ մթանում միտքն ու ճաճանչը հոգու...
 Գրնա՛, յեղբայր, դու քո ճամփեն յերգելով...
 Իսկ իմ դաժան բռնն յես ենտեղ կիջեցնեմ,
 Ուր կըլինենք մենք վերջապէս հավասար—
 Գերեզմանի մութ, հյուրընկալ թաց փոսում...)

ԲԱՆԱԿԸ ՅԵՐԵՎԱՆԻ ՏԱԿ *)

(Հասկանցներ)

I ՀԱՅՐԵՆԻՔ

Հե՛յ հայրենիք իմ ցանկալի, ո՛ւմ պիտոն արդյոք՝ քեզ հիշելով՝
 Ձի թրոթրոտ քաղցրը, ուժգին զգացմունքների խոր հուշերով...
 Ո՛վ, տեսնելով քեզ վրտանգված, գլուխն իսկույն զոհ չի դնի
 Յե՛մ չի թափի փառքիդ համար վերջին կաթիլն իմ արցունի...

Ո՛վ չի սիրի այն հողը, ուր առջին անգամ աչքը բացեց
 Յե՛մ յերջանիկ, լուս-մանկութիւնն նրա ուրախ որը վաղեց,
 Ուր փայփայեց մեր մայրը մեզ գորովալի անուշ ծոցում
 Յե՛մ առաջին անգամ վառվեց սիրտը մաքուր սիրո բոցում:

Ուր աղջիկներ պարկեշտասուն պատկառանքով ժամ են գրնում
 Յե՛մ մեր մատին յերագելով, մաքուր սիրով մեզ ցանկանում,
 Ուր լիացանք մենք յերկնային ականաղարդ մուգ կապուտով,
 Կենսատարած լեռնահովով և ծաղկաբույր թմրուն սդով:

*) Այս բանակը կանգնած էր 1827 թ., յերբ ուռա դորգերը դենբալ Գառ-
 կեվիչի առաջնորդութեամբ առան Յերեվանը: Գր. Որբէլյանին, իրբով սպա,
 մասնակցում էր պատերազմական գործողութիւններին:

Լեռն է այնտեղ սառցապարտակ, դե՛մ է տալիս ուան յերկնքին,
 Գեռն է հնչեղ և փրփրուն, ալիք խնդում է օլիքին,
 Խորն ու մթին են անդունդներ, իսկ այն ժայռին աչք չի հառնում
 Ինք ջրիմուռի^{*)} վտիցը ցած միայն ամպերն են անցրնում:

Լեռնայի նազով զմրուխտադույն դաշտն ու հովիտ են դալարում,
 Նըրանց միջում՝ քըշքըշալով ժիր սղըրունքն են դալարում.
 Վըճիտ ջրբի մեջն է նայում ծաղիկն իրան սիրահարված...
 Յե՛մ մարդ հրճվում է, ափսոսում, վոր ինքը չէ ծաղիկ ծնված...

Վո՛րտեղ է մի այլ վըրաստան, դե՛հ, ցույց տրվե՛ք՝ ո՛վ է կարող.
 Յե՛մ ժողովուրդ աղուհացով, միշտ չար բաղդի դե՛մ մաքառող...
 Դառերը օւ հրփոխեցին յիրտը վրացու՝ ջինջ զոհարի,
 Արն կարիճի, այն յերգիչի, իր հողի խենթ սիրահարի...

II ՀԱԿԱՏԱՄԱՐՏԻ ԱՌԱՎՈՏԸ

Վարդի գունով ծեգը ներկեց Արեւելին աղջամղում,
 Խնդանք զրկեց դեպի յերկինք և յերկըրն արմեց վողջույն,
 Վառեց ցրված, խորհրդավոր ճոխ ծալքերով ամպերն հեռվում...
 Ի՞նչ բաքանչանք է յերկնքում— խանդաղանքով սիրտ է վառվում:

Կիչերային մոտայլը հալվում, աստղեր մարում են յերկնքում
 Յե՛մ թռչուններ հազարաձայն արշալույսի յերդը յերդում.
 Առաւելայան սիրտ հովացնող, անուշաբույր հովն է փրշում...
 Տե՛մ, ծաղիկներն որորվեցին, աղում տեբեմն է շըշընջում...

Ի՛նչ, ի՛նչ սիրուն է բընութիւնն զարթը քնքուշ շառանդաղում...
 Սա... չէ՞ք լըսում, ականջ արեք—սոխակի ձայն է դեղդեղում.
 Երեկէի բլուրն^{**)} յերեվաց... զարթում է լյառը Տապանի^{***)}
 Իհա հնչեղ Հրազդանը ծեր, աշտարակներն Յերեվանի...

*) Ջրիմուռի՝ Կովկասյան տօբ (վայրի վոլխոբ) ասում է Կովկասի ամենա-
 բարձր, ժայռապատ լեռներում: Ջրիմուռները ամենահամարձակ գոգացողներն
 են համարվում Կովկասում:

**) Երեկէի բլուր (Թափա) օմունն է ուղապէս Սարգսի տղուն կիւ բար-
 ձրացող բլուրը, վորտեղից վրաց Երեկէի (Հերակլ II) Թագավորը մի թոճանակ
 օճրակոծում էր Յերեվանը:

***) Նայան Տապանի լյառը՝ Մաթո:

Շարժվեց բանակն և աղմուկեց. հնչեց թմբուկն արեւմտակ.
Կռվի համար են կազմելու շտապով վաշտերը բանակի.
Ահա՛ պայթեց մի տեղ հրացան... Ինչոր հեծվոր է արշավում...
Ինչո՞ւ չքնաղ այս առափոս մարդըս արյան է ծաղափում...

ՄԻՐՉԱԶԱՆԻ *) ՏԱՄԱՆԱԳԻՐԸ

Թե նենգավոր այս աշխարհում դու բաղդավոր լինել կուզես,
Ո՛վ այցելու իմ շերտի, սեր ու գինով հարբի՛ր լեճ պես.
Մեր ու գինու միջում խեղդել՛ի ամեն մի վիշտ, ամեն մի ցավ,
Վոր անցրնի կյանքըդ քեֆով, ինչպես վոր իմ կյանքը անցավ,
Վոր օեմ բաղդի հենց յերեսին հանդգնաբար յերգեր կանչես...
Թե չես թեկուզ յերկինք ձգտես, հող կըգառնաս դու ել ինձ պես...

*) Միրզազանը (աղանդավոր Մաղաթյան) մի յերկելի քեֆ օրհույ մաքր
և յեղել 100 տարի սրանից առաջ: Վոչ մի մեջլիս (խնձույք) չուէ շունեք այն
ժամանակվա Թիֆլիսում առանց Միրզազանի: Նրան մեծաբուժ էլին «խրախճան-
քի պապ» («լիսինիս պապա») մականունով: Գր. Որբելյանին ուղարկած զբոժ մի
փոստանովորի մեջ յերազում է մի խնձույք Միրզազանի նախադասութեամբ և
նրան նվիրում է հետեւյալ տողերը. «Տոլումբաշի ընտրեցե՛ք զգալը ծալած»
(առանձին չիկի նշան էր) արարի դեմքով խրախճանքի պապին, այդ գինու
և սիրո համար ստեղծվածին: Մեղանից վո՞րը չե անցել նրա զարթոյի. ամեն
մեկը մինչեւ իր 40-ամյա հասակը պարտավոր է նրան աշակերտել...

ՆԻԿՈԼՈՈԶ ԲԱՐԱԹԱՇՎԻԼԻ

(1816--1845)

Ն. Բարաթաշվիլին բանաստեղծ Գրիգոր Որբելյանու զբոժ
վորդին էր՝ ծնված բանաստեղծ մորից: 16 տարեկան հասակում
զարթոցում խաղի ժամանակ նա ընկավ և կոտրեց իր փոստերը: Այ-
նուհետեւ նա մնաց կաղ մինչեւ կյանքի վերջը: Այս հանդամանքը
խոր աղբեցութեան թողեց նրա հոգու վրա և պատանեկան հաստ-
կից դարձացրեց նրա մեջ խորին թախիժ և կյանքից հրաժարում:
Նրա մտքում, վոր համապատասխանում էր ժամանակակից
վրացի արխատկրատիայի լողեալին՝ լինել զինվորական, չիրա-
դործվեց նրա հաշմանդամութեան պատճառով, չիրադործվեց և
բարձրագույն կրթութեան ստանալու փափաղը, վորովհետեւ հա-
լը, իբրեւ տիպիկ վրացի թավաղ (իշխան)՝ անփույթ և չուայ՝
վառնել էր իր սոհմական հարստութեանը: Այս ամենը խորապես
անդադարձավ Նիկոլոզի պոեզիայի վրա: Ն. Բարաթաշվիլին
Նախիջևանում, փոխ-գավառապետի պաշտոնում, ծանր հիվան-
դացավ մալարիայով, նույն պաշտոնով նա փոխադրվեց Գանձակ
և մեռավ նույն հիվանդութեանից: Նրա նշխարները միայն 1893
թվին բերվեցին Թիֆլիս:

« ԶՐԵՂԵՆ՝ ԶԻՍ... »

Զրեղեն ձիս սուրում անհուն-անհայտում, ինձ ատնում, թռչում
Յեզ մեր հետևից սե ու շարագուշտ ազնավ ե կտանչում...

Սուբա՛, իմ նրժույզ, արշավը չունի սահման ու վաչ ծալք...
Յեզ տո՛ւր հովերին իմ սեպագույուն խոհերը մոռալլ...

Շեղքի՛ր բամբներ, պտտառի՛ր շրթեր, ճախրի՛ր, թո՛ղ քա տալ
ժայռեր ու ձորեր,
Ծառաղի՛ր-կրճատի՛ր, անդամահատի՛ր բժրոտացողին կյանքի սե
սրեր...

Ինչք մի՛ դարձրեր, իմ նրժույզ, տաղին, ստանաճանքին ե
անձրև-որին,

Դու մի՛ խնայիր, կտրծելով հոգնած քո խելակորույն, մոլի
հեծվորին...

Թող հեռու լինեմ իմ հայրենիքից, դուրս ընկերներից,
բարեկամներից...

Զուրկ իմ ծընողի ե սիրելիանիս մոտ ու սրտագին քաղցր
ժամերից...

Եթե եղ, ուր խավարն հաղթելի լուսից, աստեղ կը զանեմ յե
իմ հայրենիք...

Եթե եղ աստղերին, մոլորակներին կրխոտաճանեմ իմ սրտի
զաղանիք...

Տեքսեր սրտի կը հանձնեմ ծովի գոտ ալիքներին

Յեզ քո հրժայիչ, աշխուժ ու շքեղ արշավանքներին...

Սուբա՛, իմ նրժույզ, արշավը չունի սահման ու վաչ ծալք...

Յեզ տո՛ւր հովերին իմ սեպագույուն խոհերը մոռալլ...

Թող յես չը թաղվեմ իմ հայրենիքում... իմ նախնիքները չիթվին
կից, մոտ...

Թող չարժանանամ սիրածիս լացին ե մընամ սուգի, արցունքի
կարոտ...

Թող իմ գերեզմանն՝ հեռու կանաչից՝ խուլ անապատում ազատվի
փոքի

Յեզ իմ վսեկներ սեզ հողը ծածկե շառաչ-աղմուկով
փոթորիկներին...

Իմ սիրելիանի արցունքի տեղակ դիակիս յերկնի ցողեր
կըցողան,

Հարազատներին սրբի փոխարեն հրեշ-անդրդներ կը ճըլճան,
ճըլճան...

Դե՛հ, թրտի՛ր, նրժույզ, թուցրո՛ւ հեծվորիդ, անցկացրու բողբոջ
սահմանից հեռու...

Ես մի՛նչեմ հիմա չընկճից բողբոջ, ելի նրբանցից չի՛
ընկճելու...

Թող մենակ մեռնեմ... մենակ ե անտեր, բողբոջ հալածված...

Ինձ չի վախեցնի սուր թուրը բողբոջ՝ արյունով ներկված...

Սուբա՛, իմ նրժույզ, արշավը չունի սահման ու վաչ ծալք...

Յեզ տո՛ւր հովերին իմ սեպագույուն խոհերը մոռալլ...

Գոհե ի գերեզ չի անցկենալու գոտ ճակատամարտն իմ գոհած
հոգու...

Գոհե կը մնա, իմ՝ նրժույզ, մի հետք՝ ճամփան, վոր անցար, վոր
հարթել ես դո՛ւ...

Յեզ ինձ հետևող իմ ընկերների ընթացած ուղին պիտի
հեշտանա,

Յեզ նրբանց նրժույզն՝ հոնդուլին ալիքի՝ սեզ բողբոջ արաղ
առաջ կընթանա...

Զրեղեն ձիս սուրում անհուն-անհայտում, ինձ ատնում, թռչում
Յեզ մեր հետևից սեզ ու շարագուշտ ազնավ ե կտանչում...

Սուբա՛, իմ նրժույզ, արշավը չունի սահման ու վաչ ծալք...

Յեզ տո՛ւր հովերին իմ սեպագույուն խոհերը մոռալլ...

ՆՐԻՏԱՍԱՐԴ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻՍ

Տըզե՛րք, մինչ կյանքի անընթացն առաջնորդն է ձեր
Յեզ սերը չընաղ ձեր վիշտն անգամ սքանչացնում է դեռ,
Հեռա՛ւ նետեցեք բաղդի մըլիած տեղերը կըրծեից
Յեզ չո՛ր սրբեցեք հանգստորեն արցունք ձեր աչքից:

Ապրեցե՛ք ուրախ և շուտանցուկ աշխարհին հարմար,
Այրվեցե՛ք բոցում ջահելության սիրո մեջ անձար.
Ծիծաղ և բերում պատանեցող թռչնած ծերունին
Յեզ ցավակցություն՝ դառամացող ծաղկած պատանին:

Յերանի՛ նըրան, ով շուտանցուկ կյանքն ախպես տարավ,
Վար ողտադործեց իր տարիքին համեմատ և լավ...
Ինչո՞ւ մեր սրտի տենչանքների ճիշերը խեղդենք,
Անասն աշխարհի ծանրը հոգսեր մեր վրդին բարդենք:

Ձեր կյանքի ծեղին կըհաջորդեց ցերեկը անդով,
Ձեր անշահ սերին՝ գըծում յետի շահերի մեծ ծով...
Բայց քանի չե ուշ, ձեզ տամ խորհուրդ և դուք լրտեսե՛ք,
Տըզե՛րք, ինձ վրբա վործել եմ յես, լավ կատարեցե՛ք:

Մի՛ք սիրահարվի դուք պճրուհուն, թրովրացողին...
Այդ հոգի գերող և զգացմունքի հետ խաղացողին.
Միբաղի լեզուն նըրան համույք, յետանդ և չնչում,
Բայց սերը, ամա՛ղ, նըրա սրտին յերբեք չի կաշում:

ԻՄ ԱՍՏՂԻՆ

Ի՛մ բաղդի ասաղ ի՛նչ ես վրբա բարկանում...
Վարժան տոնջեո, քեզնով եմ յես սքանչանում...
Բռեկեացա չո մշուչին, ամպերին...
Յերարո արդեն վարժվեց ան վշտերին...

Նու մի՛ կարծեք թե մեծ աղետ կը դուժեո,
Թե վար հանկարծ բըքից հետո մըլուչեո...
Խի՛, դու գիտեո՞ ինչքան ես ինձ դուր գալի,
Յերբ մըլուչի միջից ես ինձ լուս տալի...

Ի՛նչ անտակ գեմք ել սպենաս ցույց տաս դու,
Բե՛զ կըքձաեմ, ի՛մ յերկնային լուստուռ,
Դու՛ւ ես իմ լույսն, իմ հողեոր կյանքի լույս,
Իմ խաղտած կյանքի խնդանք, միակ հույս:

Ժպտա՛, իմ ասաղ, ամպն յերեսից ցած քաշիր,
Դո վրամագած սիրտը, ժպտա՛, մի՛ մաշիր.
Նեռի՛ք դու հուր, հուր յերկնային իմ հոգին,
Թափի՛ք վրբա շողեր քնքուշ, կաթոգին...

Ո՛Վ ԴՈՒ ՉԱՐ ՎՈԳԻ...

Ո՛վ դու Չար Վոգի, քեզ ո՞վ կանչեց բաղդիս զեկտվար,
Մաքիս ու կյանքիս խաղաղ ընթացքն հուղելու համար,
Ո՛ւր և իմ հանգիստն — ինչո՞ւ լցրիք կասկածով հոգիս,
Ինչո՞ւ խեղդեցիր դու մանկական հավատը կըրծելու:

Ա՛յդ եիր միթե՛ դու խոստանում պատանուս անմեղ...
Դու ինձ խոստացար ազատություն աշխարհում այս նեղ.
Դու ինձ խոստացար տառապանքից ծընել մանուկ-բաղդ.
Դու ինձ խոստացար գըծոխքն անդամ դարձնել դըրախտ...

Ո՛ւր են, ո՞ւր, ասա՛, չո գըրավիշ, սիրուն խոստումներ...
Ինչո՞ւ հարուցիր և... փշրեցիր իմ մըտորոտներ...
Ո՛վ դու Չար Վոգի, պատասխանի՛ր, մի՛ թաղնըվիր դու,
Դո կախարդական ույթն ո՞ւր մընաց, թուլացավ ինչո՞ւ:

Ունիմվի՛ աչն սրն, յերբ խոստումիս յես կույր տրվեցի
Յեզ վազջ ելությամբ անուրջներին սիրուն զահվեցի.
Այն սրից հեռո անվերադարձ հանգիստըս կորավ,
Յեզ արցունքն տնդամ չի հաղեցնում հոգուս մեծ ծարրով:

Հեռո՛ւ ինձանից, ո՛վ գայթակղիչ Վոգի Չարության...
Ի՛նչ եմ յես հիմա — աննրպատակ զոհ միայնության.
Անհաղատ եմ յես, կասկածափրա, հոգով ստոնայի...
Վա՛յ ինչին զեղավ չո կախարդիչ թևրդ գառնայի...

ՎԱԽՏԱՆԳ ՈՐԲԵԼԻԱՆԻ

(1812—1890)

Վախտանգ Որբելիանու մայրը Հերակլ II թագավորի կրտսեր դուստր Թեկլենն էր, վոր միևնույն ժամանակ բանաստեղծ էր և մանկության պարիքում տղի չորեր հազած մտանակցել եր իր քաջաբի հոր մզած պատերազմներին։ Առաջինը նա գցեց իր վաղղի Վախտանգի սրտում հայրենասիրության սերմերը։ 1832 թվին Վախտանգը նույնպես աջասրվեց, իբրև մանակից Ռուսաստանի դեմ կողմակերպված դաշադրության։ 1837-ին ներումն ստանալով՝ վերադարձավ հայրենիք և ապա մտավ զինվորական ծառայության։ Մեռավ զինվորալ-մայորի աստիճանում։ Գրել սկսեց 4 տարեկան հասակից միայն։ Նա մանկությունից լերագետ է զբոստանում։ Վրաստանի անկախության մասին և իր վատանալորների նյութ է գործերը Վրաստանի պատմական առասպելները։ Ամենաաշխատասերն է և վրացի բանաստեղծների մեջ։ Նրա պոեզիայի միակ մոտիվը հայրենասիրությունն է։

Վախտանգ Որբելիանի

ՅԵՐԿՈՒ ՇԵՆՔ

Նորից արևի շողերը գլխան յերկու մեծ շենքի...
Նրբանցից մեկում հնչում է անգուլ ժըխորը կյանքի.
Յերկրորդն է ինչպես մի դամբան արխուր, սառած ու դաժան.
Նրբա մոտերքում չըկա մարդկային կյանքի թույլ նըշան։

Սուղինն է գործ նոր ժամանակի, հրաշակերտ, սիրուն,
Նա իր պլշրանքով մոռումն անցնողի աչք և հրապուրում.
Ծաղկում են նրա շուրջը ծաղկոցում չուշաններ, վարդեր,
Փայլում են նրա չըմականերում զմրուխտե մարգեր.
Նրբա գեղաների պատերն են դոսից ու ներսից դուզված,
Ինչպես մի սիրուն աղջիկ հարսնության համար պատրաստված...
Սակայն այս պատերն, իբրև մի նոր գործ, նրբա կիրն ու քար
Թույլ են աւ վրտիտ, ինչպես նրբալիզմ որխորդ անկար...

Յերկրորդն է մնացորդ հին կացարանի մեր նախնիքների.
Ի՞նչ է նա ուժով, կառուցված և նա ուժով լի ձևով...
Ընդարձակ ամրոց, սրբադան տաճար, բուրդեր հաղթանդամ,
Գավիթ և պալատ մեծ ու պատկառուն, յերբեմն վարթած,
Իսկ հիմա անծածկ, անտեր ու ախուր, մամուսպատ, ափեր,
Մերուկ հընամյա և յերկարատանջ, հաղթված կարեվեր...
Նրբա մեջ իրար հեռ են խըճըճվել մոլախտ, փուշեր,
Նայողի սրտում ծնեցնող արխուր խոհեր ու հուշեր...

Այն նաբը չունի յերկար ապրելու ուժը անհրաժեշտ.
Ի՞նչ գարում նրան կավերեն քամին և անձրեր հնչաւ.
Յե՛վ յերբ նրա նուրբ և գեղապաճույճ պատերը փլչեն,
Նրբանց բեկորներն յերկրի վրայից արագ կը կորչեն:
Հեռը կը կորչի և հեռը նրբա, նրբա հիշատակ...
Նա չունի անցյալ, չունի ապագա յերկնքի նա տակ...

Մահայն այն յերկրորդն, այն հաղարամյա շենքն ալեւոր...
 Նա չի վախենում փոթորիկներից, տեղից դարեւոր.
 Թեպեա անարգված, թշնամիներից, թեպեա խախտված,
 Բայց հերոս է զեռ նա՝ հերոսների ձեռով կերտըված:
 Յե՛վ թե զա մի որ, յերբ նըրա հուժկու պատերը փուլ դան,
 Նըրանց նշաններն հալկեա կը պահի խոհուն ապագան...
 Նըրա հեշատակն աշխարհի վըրա հալերժ կը մնա—
 Ու՛մ անցյալն է մեծ, ապագան նույնպես նա մեծ կունենա...
 Նա ունի անցյալ մեծ, յերկար, ուսիչ պատմություն խորին...
 Արյունով նըրա անցյալն է գըրած նըրա պատերին...

Վ Ա Ն Դ Ա Կ

Մի՛ք ճնշի դուք սերն աղջըկա. ինչպես քնքուշ ալիք ծովի՝
 Թող շարժվի վոր կողմ ուղե՝ քըմահաճո, իր կամովի:
 Ո՛հ, մի՛ք զերի սեգ արծիւին—թողե՛ք ճախրե իր հայրենիք.
 Նըրա կայանն է Ժայռ վես և դրոսավայրն՝ աղաւ յերկինք...

Մի՛ք ճնշի դուք սերն աղջըկա. ինչպես քնքուշ ալիք ծովի՝
 Թող շարժվի վոր կողմ ուղե՝ քըմահաճո, իր կամովի:
 Մի՛ք կաշկանդի խոսքը մորդու, թեկուզ և նա ձեզ դուր չըգա...
 Թող նա հնչե բարձր ու ազատ—դըրա համար միայն նա կա:

Ի՛նձ քընտրեցին արարածին վանդակը փակ չի սող դուլի...
 Վոքաւ համար շղթաներից մահն ուլեյի է ցանկալի...

ՄԻՒՆԻԼ ԹՈՒՄԱՆԻՇՎԻԼԻ

(1818—1875)

Միւ. Թումանիշվիլին վրացիսո հայ եր և վրաց Գիորգի-
 վերջին թագավորի զիվանապետ Բիրթվելի կրտսեր վորդին Ակա-
 նավոր հասարակական գործիչ եր և հրապարակախոս (կծու ֆե-
 յիստոնիստ): Ճորտերի ազատության ուժորմները կիրառելու
 գործում Վրաստանի մեջ նա եր առաջնակարգ, ղեկավարող գեր
 կատարողը: Գրում եր վրացերեն և ռուսերեն: Վտանավորներ հո-
 րինել է միայն պատանեկական հասակում (18—20 տարեկան):
 Հրաաարակած ունի միայն մի դրքույկ թախճալի առժամանակով
 աուդոված բանաստեղծությունների: Թարգմանած ունի և Պուշ-
 կինի մի քանի յերկերը: Նրա վորդիքն էյին հայտնի հաստրակա-
 կան գործիչ Գեորգ և Վասիլ Թումանյանները, «НОВОЕ СООБЩЕНИЕ» ի
 խմբագիրները: Նրա զուտսերն եր նույնպես վրաց հայտնի մանկա-
 կան դրող և մանկական «Ջեջիլի» ամսագրի խմբագիր Անատո-
 սիան, վրաց նշանավոր մարքախոս —զեկագիր Գիորգի Կերեթե-
 յու աթուսթը:

ԻՄ ՍԱԶԻՆ

Մի՛ տանջիր, ի՞մ սաղ, թի՛ հուշիր նորից
Իտղարող սրտում սերը վաղուցվան,
Մի՛ խոսիր անցած սիրուն որերից՝
Անդարձ ու վաղուց արված մոռացման...
Թրուա՛ն այն որերն, յերբ դու ի՞մ ձեռին
Չայնակից եյիր իմ մատաղ սերին...

Խաղարող աչքին ել չեն հրապարի
Կյանքը վերհուղող արևն զւ գարուն,
Ի՞մ սաղ, վերհիշումն ել հետ չի բերի
Պատանեկության տարիքը սիրուն.
Թրուա՛ն այն տարիքն, յերբ դու ի՞մ ձեռին
Չայնակից եյիր իմ մատաղ սերին...

ԳԻՆՈՒ ԹԱՍԸ

Յեա ե՛ն բյուրեղ թաւն եմ սիրում,
Քերբուր գինին մեջն ե յետում,
Մեջն ե խաղում, շողում պեծ-պեծ,
Վրճիտ լալի ցոլք ե կարծեո:

Յեա ե՛ն մարջան չուրթն եմ սիրում,
Վարը ժպտում ե, հրապուրում...
Յեմ ծարավին նըրա սիրով
Կըշտացընում տաք պաշերով:

Բայց անկրթակ ե անհամբույր
Շուրթերից յեա խորչում եմ լաւ...
Սորչում եմ յեա նըրանց տեսից,
Ինչպե՞ս գինու գառարկ թափից...

ՐԱՓԻՆԸ ԵՐԻՍԹԱՎԻ

(1824—1901)

Բարձրատուն և կրթված ծնողների զավակ եր իշխանադն Բա-
լուն (Ռափայելը): Մի քանի տարի կրթվում եր վանքում թի նշա-
նավար արեղայի մոտ, ապա ավարտեց Թիֆլիսի ազնվականների
դպրոցը: 1846-ից սկսեց պաշտոնավարել զանազան հիմնարկնե-
րում և միեւնույն ժամանակ պարսպել գրականությամբ: Դրում եր
վստանաւորներ, պատմվածքներ, պիեսներ: Թարգմանել և Կորյու-
վի բնաիր առակները: Կատարում եր մի ժամանակ վրաց լեզվի
գրաքննիչի (ցենզոր) պաշտոն, բայց չուտով արձակվեց, վարով-
հեաե վրաց մամուլին տվել եր «անհամապատասխան» աղտոտ-
թյուն: Ու երիտթավի պսեղիայի ուժը կաղմում եմ նրա գյուղա-
ցիական վստանաւորները:

ԽԵՎՍՈՒՐԻ*) ՀԱՅՐԵՆԻՔԸ

Ուր ծնվեցաւ և մեծացաւ, ուր թրուով նեան իմ տնչեղ,
 Ուր ապրեցին պապերս օրհնած, թողին տնջուն լուսազնեղ,
 Մանկությանից ինձ հարազատ՝ իմ հայրենիքն և տնջուղ:
 Ի՞նչ են ծառերն անմահության մեր ժայռերի մօտ տնջուղ,
 Ի՞նչ և դրբախտն այս աշխարհի հայրենիքիս մօտ խղճուղ:

Սիրում եմ յես մեր սե ժայռեր, վոր միշտ ձընուժն են խնդում,
 Ուր անդըններ բուն են դընում ու ջրվեժներ են թնդում,
 Ուր աշծյամի ու ջրխվերի(**) տնուշ մրտերն են սուսում:
 Ի՞նչ են ծառերն անմահության մեր ժայռերի մօտ տնջուղ,
 Ի՞նչ և դրբախտն այս աշխարհի հայրենիքիս մօտ խղճուղ:

Տափում ինչքան չրքեղ ապրում, սարի կարոտն և մաշում.
 Տկըր քարափն՝ ինչպես մազնիո՞ հողիս իր կողմ և քաշում.
 Քաղցր և այնտեղ մահն ինձ համար, կյանքն և աղու ցած՝ փոսում...
 Ի՞նչ են ծառերն անմահության մեր ժայռերի մօտ տնջուղ,
